

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՌԵԺԻՄԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ
ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը սահմանում է արտակարգ իրավիճակի ռեժիմի կանոնները խախտելու համար վարչական պատասխանատվությունը:

Հոդված 2. Արտակարգ իրավիճակի ռեժիմի կանոնները խախտելը

1. Արտակարգ իրավիճակի ժամանակ ազատ տեղաշարժվելու պայմանները, պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

2. Արտակարգ իրավիճակի տարածք մուտք գործելու և տարածքից դուրս գալու հատուկ ռեժիմը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև յոթանասունապատիկի չափով:

3. Արտակարգ իրավիճակի ժամանակ ֆինանսատնտեսական գործունեության առանձին տեսակների իրականացման սահմանափակումները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

4. Արտակարգ իրավիճակի ժամանակ որոշակի ապրանքների կամ դրանց առանձին խմբաքանակների արտահանման կամ ներմուծման սահմանափակումները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

5. Արտակարգ իրավիճակի ժամանակ գործադուլների և իրավաբանական անձանց գործունեությունը կասեցնող կամ դադարեցնող այլ միջոցառումների արգելքը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

6. Արտակարգ իրավիճակի ժամանակ տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումները խախտելը, ինչպես նաև դրանց զննման իրականացմանը խոչընդոտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

7. Արտավական գործունեություն իրականացնողի կողմից արտակարգ իրավիճակի ընթացքում սահմանված տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով:

8. Արտակարգ իրավիճակի ժամանակ զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ և թունավոր նյութերի, հատուկ միջոցների վաճառքի արգելքը, ինչպես նաև թմրամիջոցների ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, ուժեղ ներգործող նյութեր պարունակող դեղագործական միջոցների և պատրաստուկների, էթիլային սպիրտի, ալկոհոլային խմիչքների, սպիրտ պարունակող արտադրանքի շրջանառության հատուկ ռեժիմը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարհինգհարյուրապատիկի չափով:

9. Արտակարգ իրավիճակի ժամանակ որպես սահմանափակում նախատեսված մեկուսացման կամ ինքնամեկուսացման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրհիսնապատիկի չափով:

10. Սույն հոդվածի 9-րդ մասի իմաստով մեկուսացում է համարվում անձանց, այդ թվում՝ հիվանդի կամ վարակվածի կամ նրանց հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումը դրա համար նախատեսված որոշակի տարածքում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը բացառելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:

Սույն հոդվածի 9-րդ մասի իմաստով ինքնամեկուսացում է համարվում անձանց, այդ թվում՝ հիվանդի կամ վարակվածի կամ նրանց հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումն իրենց մշտական բնակության կամ իր նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:

Հոդված 3. Արտակարգ իրավիճակի ռեժիմի կանոնների խախտման վերաբերյալ գործերի քննությունը

1. Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում է Արցախի Հանրապետության ոստիկանությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված կարգով:

Հոդված 4. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՌԵԺԻՄԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը
	<p>«Արտակարգ իրավիճակի ռեժիմի կանոնները խախտելու համար վարչական պատասխանատվության մասին» օրենքի նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ներկայումս Արցախի Հանրապետությունում հայտարարված է արտակարգ իրավիճակ, որի շրջանակներում անձանց որոշ հիմնական իրավունքներ ենթարկվում են ժամանակավոր սահմանափակումների: Սակայն ներկայումս օրենսդրության մեջ բացակայում են նշված սահմանափակումների խախտման իրավական հետևանքները: Ուստի անհրաժեշտ է պատասխանատվություն նախատեսող նորմերի միջոցով ապահովել արտակարգ իրավիճակի սահմանված կարգը:</p> <p>Իսնդիրը նրանում է, որ ներկա դրությամբ համաճարակի հետևանքները նվազագույնի հասցնելու նպատակով անձինք ենթարկվում են մեկուսացման և ինքնամեկուսացման: Տեղեկատվության հրապարակման և տարածման որոշ սահմանափակումներ են նախատեսված զանգվածային լրատվության միջոցների, ֆիզիկական և իրավաբանական անձանց համար: Գործնականում միշտ չէ, որ հնարավոր է լինում առանց իրավական պատասխանատվության միջոցների կիրառման ապահովելու նշված պահանջների պատշաճ կատարումը: Հիվանդ և վարակակիր անձինք հաճախ հրաժարվում են մեկուսանալ կամ ինքնամեկուսանալ: Արդյունքում հնարավոր չի լինում ապահովել վարակի տարածման կանխումը:</p>
2.	Առաջարկվող կարգավորումների բնույթը
	<p>Նախագծով սահմանվում է արտակարգ իրավիճակի ռեժիմի կանոնները խախտելու համար վարչական պատասխանատվությունը:</p>
3.	Ակնկալվող արդյունքը
	<p>Նախագծի ընդունմամբ կապահովվի արտակարգ իրավիճակներում սահմանված կանոնների պատշաճ կատարումը, այն է՝ բնակչության առողջության պահպանման և առողջական վիճակի բարելավման նպատակով սանիտարականիսարգելիչ, կարանտինային հատուկ միջոցառումների, վարակի տարածումը կանխելու և վերացնելու պայմաններ սահմանելու, ինչպես նաև բնակչության պաշտպանության կանխարգելիչ այլ</p>

	աշխատանքների և միջոցառումների ժամանակին, պատշաճ, օպերատիվ, արդյունավետ կազմակերպումը և իրականացումը:
4.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք
	Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի Օրենսդրության կատարելագործման բաժնի կողմից:
5.	Նախագծի նորմատիվ բնույթը
	Նախագծի նորմատիվ բնույթը պայմանավորված է նրանով, որ այն պարունակում վարքագծի պարտադիր կանոններ, որոնք արտակարգ իրավիճակում գործում են Արցախի Հանրապետության ողջ տարածքում:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ